

**ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ  
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N << ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/25-1 >>**

ք. Երևան

« 5 » սեպտեմբերի 2021 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Գրիգորյան Շին Մոնտաժ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Պողոյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի կարիքների համար բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքները (այսուհետև՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:**

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են << օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **Համաձայն հավելված 2-ի:**

աշխատանքների կատարման վերջնաժամկետը

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

**2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ**

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ << օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերազման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

### **3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

### **3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

### **3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի

ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

#### **4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **13155326.63 (տասերեք միլիոն հարյուր հիսունհինգ հազար երեք հարյուր քսանվեց և 63 լումա) ՀՀ դրամ, որից 2192554.46 (երկու միլիոն հարյուր իննսուներկու հազար հինգ հարյուր հիսունչորս և 46 լումա) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը,**

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,19 (զրո ամբողջ տասնինը հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 40 (քառասուն) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱՋԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու

մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 33 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում **Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:**

### 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### Պատվիրատու

Երևանի քաղաքապետարան  
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1  
Կենտրոնական գանձապետարան  
Հ/Հ 900032313174  
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան



#### Կապալառու

«Գրիգորյան Շին Մոնտաժ» ՍՊԸ  
Նուբարաշեն 11փ. 7շ. Բն17  
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ  
Հ/Հ 163548015573  
ՀՎՀՀ 00494838

Ա. Պողոսյան

(ստորագրություն)



*Handwritten signature and initials in blue ink.*

Հավելված թիվ 1  
 « Դ » սեպտեմբերի 2021 թ. կնքված  
 կնքված աշխատանքների կատարման  
 թիվ << ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/25-1 >> գնման պայմանագրի

**Երևան քաղաքի Արարիկի վարչական շրջանի Բաբայան 26-34 շենքերի բակային տարածքների և  
 խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքներ**

**Ծավալաթերթ-Նախահաշիվ**

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	Ծավալը	Միավորի արժեքը /հազ դրամ/	Ընդամենը /հազ դրամ/
1	2	3	4	5	6
	<b>Քանդման աշխատանքներ</b>				
1	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ /տեղում առկա շին աղբ/	տն	1.500000	3.123438	4.685156
	<b>Վերանորոգման աշխատանքներ</b>				
2	Բուսահողի բարձում ա/ինքնաթափերի վրա	մ <sup>3</sup>	51.000000	2.379145	121.336389
3	Բուսահողի տեղափոխում 35 կմ-ից	տն	61.200000	5.103597	312.340133
4	Բուսահողի փռում ձեռքով	մ <sup>2</sup>	510.000000	0.378270	192.917538
5	Սիգամարգերի տեղադրում /1մ2-35գրամ սերմ/	մ <sup>2</sup>	510.000000	0.276896	141.216868
6	Բետոնե գեղարվեստական սալիկների քանդում 3մ2	մ <sup>3</sup>	0.150000	1.897842	0.284676
7	Ցայտադրյուրի տեղի բետոնացում B12.5 դասի բետոնով	մ <sup>3</sup>	0.300000	35.682935	10.704880
8	Հարթակի երեսապատում բազալտե սալերով 30մ <sup>2</sup>	մ <sup>2</sup>	3.000000	11.805036	35.415109
9	Խճի շերտի իրականացում 7 սմ հաստությամբ	մ <sup>3</sup>	0.150000	12.897169	1.934575

10	Բազալտե եզրաքարերի տեղադրում 300x150 մմ չափերի,բետոնե հիմքով	զմ	15.000000	10.885224	163.278362
11	Ցայտիչի տեղադրում Φ15 մմ	հատ	2.000000	3.659304	7.318607
12	Գոյություն ունեցող լուսավորության հենասայան վերանորոգում պլաֆոն+լամպ	հատ	2.000000	7.216396	14.432792
13	Միացում առկա ցանցին,ABBԳ -2x6մմ2 հատվածքով մալուխի անցկացում վերզետևյա/,ճոպանով	զմ	20.000000	1.168954	23.379086
<b>Բազրիք-1</b>					
14	Թերթապողպատի տեղադրում 120x120x4մմ	տն	0.006000	746.043409	4.476260
15	Անցքերի շաղափում	հատ	24.000000	0.140661	3.375858
16	Դիուբելներ Φ6 մմ	հատ	24.000000	0.058339	1.400132
17	Մետաղական բազրիքների պատրաստում և տեղադրում մետաղական խողովակներից	տն	0.082000	78.154302	6.408653
18	42x2,5մմ մետաղական խողովակի արժեքը	զմ	33.606557	1.196594	40.213420
19	Մետաղական մասերի շերտ ներկում	մ <sup>2</sup>	5.600000	1.220293	6.833639
<b>Բազրիք-2</b>					
20	Թերթապողպատի տեղադրում 120x120x4մմ	տն	0.013000	746.043409	9.698564
21	Անցքերի շաղափում	հատ	56.000000	0.140661	7.877002
22	Դիուբելներ Φ6 մմ	հատ	56.000000	0.058339	3.266975

23	Մետաղական բազրիքների պատրաստում և տեղադրում մետաղական խողովակներից	տն	0.195000	78.154302	15.240089
24	42x2,5մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	79.918033	1.196594	95.629474
25	Մետաղական մասերի 2շերտ ներկում	մ <sup>2</sup>	13.000000	1.220293	15.863804
<b>Բազրիք-3</b>					
26	Թերթապողպատի տեղադրում 120x120x4մմ	տն	0.010000	746.043409	7.460434
27	Անցքերի շաղափում	հատ	100.000000	0.140661	14.066075
28	Դյուբեղներ Φ6 մմ	հատ	100.000000	0.058339	5.833884
29	Մետաղական բազրիքների պատրաստում և տեղադրում մետաղական խողովակներից	տն	0.156000	78.154302	12.192071
30	42x2,5մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	63.934426	1.196594	76.503580
31	Մետաղական մասերի 2շերտ ներկում	մ <sup>2</sup>	10.700000	1.220293	13.057131
32	Հենապատի բազալտե թասակի տեղադրում 530x80մմ կտրվածքի, L=29մ	մ <sup>2</sup>	15.370000	43.002939	660.955175
<b>Բազրիք</b>					
33	Թերթապողպատի տեղադրում 120x120x4մմ	տն	0.020000	746.043409	14.920868
34	Անցքերի շաղափում	հատ	164.000000	0.140661	23.068364
35	Դյուբեղներ Φ6 մմ	հատ	164.000000	0.058339	9.567570

36	Մետաղական բազրիքների պատրաստում և տեղադրում մետաղական խողովակներից	տն	0.276000	78.154302	21.570587
37	42x2,5մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	113.114754	1.196594	135.352487
38	Մետաղական մասերի 2շերտ ներկում	մ <sup>2</sup>	19.000000	1.220293	23.185559
<b>Ընդամենը</b>					<b>2257.26183</b>
<b>ԱԱՀ</b>		<b>20%</b>			<b>451.45237</b>
<b>Ընդամենը</b>					<b>2708.71420</b>

**Երևան քաղաքի Արարկիր վարչական շրջանի Տիգրանյան 5 շենքի բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքներ**

**Ծավալաթերթ-Նախահաշիվ**

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	Ժավալը	Միավորի արժեքը /հազ դրամ/	Ընդամենը /հազ դրամ/
1	2	3	4.000000	5	6
<b>Շիանարարական աշխատանքներ</b>					
<b>Քանդման աշխատանքներ</b>					
1	3. Տարածքի մաքրում կողճաշիվերից և անկանոն աճած թփերից	հատ	20.000000	0.10000	2.00000
2	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ <sup>3</sup>	17.240000	2.20000	37.92800
3	Բնահողի ետլիցք ձեռքով	մ <sup>3</sup>	9.400000	0.92000	8.64800
4	Բնահողի տոփանում	մ <sup>3</sup>	9.400000	0.21000	1.97400
5	Շին աղբի բարձում ա/հնքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ /այդ	տն	43.900000	2.65000	116.33500

	Թվում գոյություն ունեցող շին աղբի/					
	<b>Վերանորոգման աշխատանքներ</b>					
6	Խճի շերտի պատրաստում 5սմ հաստությամբ /բետ սալիկների տակ/	մ <sup>3</sup>	0.150000	12.48000	1.87200	
7	Ց/ավազե չոր խառնուրդի պատրաստում բետոնե սալիկների տակ 4սմ հաստությամբ	մ <sup>3</sup>	0.120000	12.98500	1.55820	
8	Բետոնե գեղարվեստական սալիկներից հատակի պատրաստում 60մմ հաստությամբ	մ <sup>2</sup>	3.000000	5.48000	16.44000	
9	Ցայտադրյուրի պատրաստում և տեղադրում մշակված բազալտե քարից 250x250x900մմ	կ-տ	1.000000	188.20000	188.20000	
10	Ցայտադրյուրի տեղի բետոնացում B12.5 դասի բետոնով	մ <sup>3</sup>	0.030000	34.55100	1.03653	
11	Ամրան Φ14A500c	տն	0.001360	605.50000	0.82348	
12	Պողպատե թիթեղ 200x200x2մմ 0,04մ2	տն	0.000628	722.30000	0.45360	
13	Ցինկապատ թասակ Φ200մմ ,h=100մմ	հատ	1.000000	12.88000	12.88000	
14	Ցայտիչի տեղադրում Φ15 մմ	հատ	1.000000	3.54000	3.54000	
15	Ավազի նախապատրաստական և պաշտպանիչ շերտերի իրականացում	մ <sup>3</sup>	8.930000	4.65000	41.52450	
16	Հավաքովի ե/բ դիտահորի կառուցում	մ <sup>3</sup>	0.170000	135.60000	23.05200	
17	Բետոնե նախապատրաստական շերտ B-7,5 դասի բետոնից	մ <sup>3</sup>	0.120000	30.79000	3.69480	
18	Խճի շերտի իրականացում	մ <sup>3</sup>	1.300000	12.48000	16.22400	

19	Մետաղական դռնակ	տն	0.015000	677.85000	10.16775
20	Ռետին	զմ	3.000000	0.50200	1.50600
21	Ծխնի	հատ	2.000000	0.75300	1.50600
22	Փական	հատ	1.000000	3.13800	3.13800
23	Ջերմամեկուսիչ սալ (երկտավր 30x3 L=400մմ -2 հատ, 30x3 L=590 մմ -4 հատ պլաստպաս, 30x3 L=490 մմ 8 հատ պլաստմաս, խարիսխ - 4 հատ փրփրապլաստ h=100մմ հատ, հեղյուս) -1	կ-տ	1.000000	8.53600	8.53600
24	Մետաղական դռնակի 2 շերտ յուղաներկում	մ <sup>2</sup>	3.000000	1.14300	3.42900
25	Պոլիվինիլքլորիդե լայնուկավոր խողովակների մոնտաժում de63 (կոյուղի)	զմ	17.800000	0.62400	11.10720
26	Պոլիէթիլենային լայնուկավոր խողովակների մոնտաժում de63, PN=1.0 ՄՊա (խմելու ջրի)	զմ	28.000000	1.00000	28.00000
27	Պլաստմասե պատյան խողովակ DN32	զմ	8.000000	0.49000	3.92000
28	Մետաղե գնդային փական DN15	հատ	1.000000	4.07500	4.07500
29	Պոլիէթիլենե խողովակների լվացում, պատահանում	կմ	0.028000	66.32100	1.85699
30	Գոյություն ունեցող մետաղական ճաղաշարի մետաղական մասերի երկշերտ յուղաներկում /հաշվարկված է երկկողմ հարթ մակերես/	մ <sup>2</sup>	130.500000	1.14300	149.16150
31	Ցայտադրյուրի հարթակի երեսապատում բազալտե սալերով 30մմ	մ <sup>2</sup>	1.000000	11.43000	11.43000
32	9. Խաղահրապարակներում կապույտ ավազի գլաքարի շերտի իրականացում, 10 սմ հաստության	մ <sup>3</sup>	4.880000	7.38500	36.03880
33	Խաղասարքի ապամոնտաժում և վերատեղադրում	հատ	1.000000	6.00000	6.00000
*34	Արդամանների տեղադրում ամրագումով	հատ	6.000000	2.63900	15.83400

*35	Նստարանների տեղադրում ամրացումով	հատ	7.000000	5.27900	36.95300
*36	Խաղասարքերի տեղադրում ամրացումով	հատ	7.000000	7.47800	52.34600
<b>Գոյություն ունեցող զրուցարանի վերակառուցում</b>					
37	Ցինկապատ պրոֆիլ թիթեղից ծածկույթի պատրաստում 0.55մմ հաստությամբ KՈՂ-21-0.55մմ	մ <sup>2</sup>	18.000000	4.20200	75.63600
38	Մետաղական թիթեղ 150x6 L=150մմ - ճհատ	տն	0.006359	722.00000	4.59084
*39	Նստարանների տեղադրում ամրացումով	հատ	2.000000	5.20000	10.40000
40	Սեղանի մետաղական թիթեղ 800x3 L=2000մմ - 1հատ	հատ	0.037680	470.70000	17.73598
41	Խճի շերտի պատրաստում 5սմ հաստությամբ	մ <sup>2</sup>	50.850000	0.82500	41.95125
42	Մանրահատիկ ասֆալտաբետոնե ծածկույթի իրականացում 3սմ հաստ. /300x150մմ չափերով եզրաքարերի երկայնքով 0,5 մ լայնությամբ/+315,0 մ2 բակային տարածքում	մ <sup>2</sup>	365.850000	3.17400	1161.20790
43	Բուսահողի բարձում ա/ինքնաթափերի վրա	մ <sup>3</sup>	12.090000	2.30400	27.85536
44	Բուսահողի տեղափոխում 35 կմ-ից	տն	14.508000	4.94200	71.69854
45	Բուսահողի փռում ձեռքով	մ <sup>2</sup>	120.900000	0.36600	44.24940
46	Սիզամարգերի տեղադրում /1մ2-35գրամ սերմ/	մ <sup>2</sup>	120.900000	0.26800	32.40120
<b>Էլեկտրալուսավորություն /2հատ/ H=6,1մ</b>					
47	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ <sup>3</sup>	1.400000	4.10300	5.74420

48	Բնահողի ետլիցք ձեռքով	մ <sup>3</sup>	0.650000	0.92000	0.59800
49	Ավելտորդ բնահողի բարձում ա/հինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	1.387500	3.02400	4.19580
50	Կետային հիմքերի պատրաստում պատրաստում B-15 դասի բետոնից	մ <sup>3</sup>	0.750000	50.15000	37.61250
51	133x4մմ մետաղական խողովակի տեղադրում բետոնի մեջ	տն	0.038190	86.00000	3.28434
52	133x4մմ մետաղական խողովակի արժեքը	զմ	3.000000	5.99500	17.98500
53	Մետաղական խողովակներից հենասյուների տեղադրում	հատ	2.000000	13.23000	26.46000
54	102x4մմ մետաղական խողովակի արժեքը	զմ	15.200000	4.52300	68.74960
55	32x3մմ մետաղական խողովակի արժեքը	զմ	2.000000	1.00000	2.00000
56	Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում	տն	0.151284	35.20000	5.32520
57	Լուսատուների տեղադրում /LED IP65	հատ	2.000000	18.20000	36.40000
58	Մեկուսիչ SՖ-20	հատ	2.000000	0.60000	1.20000
59	Մեկուսիչ Շեկույզ	հատ	2.000000	0.87000	1.74000
60	Բաժանարար մետաղական տուփիկ	հատ	2.000000	1.88000	3.76000
61	Բացակայող ապակե պլաֆոնների տեղադրում /համանման գոյություն ունեցողին /LED լամպով 30վտ , 4500 K	հատ	2.000000	18.20000	36.40000
62	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ <sup>3</sup>	16.560000	2.20000	36.43200

63	Բնահողի ետլիցք ձեռքով	մ <sup>3</sup>	12.660000	0.92000	11.64720
64	Բնահողի տոփանում	մ <sup>3</sup>	12.660000	0.21000	2.65860
65	Ավելտորդ բնահողի բարձում ա/հինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	13.140000	3.00000	39.42000
66	Ավազից անկողնակի պատրաստում 1 մալուխի համար	գմ	48.700000	0.22000	10.71400
67	Ավազ /ստորին և վերին պաշտպանիչ շերտ 10 սմ հաստ 1,6+1,6 մ3	մ <sup>3</sup>	3.200000	2.60000	8.32000
68	Խողովակ վինիլպլաստե Φ50մմ	գմ	48.700000	0.59000	28.73300
69	ABBГ 2x10մմ2 հատվածքով մալուխի անցկացում /ստորգետնյա/	գմ	48.700000	0.45000	21.91500
70	Պաշտպանիչ /զգուշացող /ժապավենի տեղադրում 300մմ լայնքով	գմ	48.700000	0.10200	4.96740
	<b>Ոռոգում</b>				
71	Ասֆալտաբետոնե ծածկույթի քանդում	մ <sup>3</sup>	1.440000	3.59000	5.16960
72	Խճի շերտի քանդում	մ <sup>3</sup>	2.400000	0.44000	1.05600
73	Շին աղբի բարձում ա/հինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	7.488000	3.02000	22.61376
74	Բետոնե եզրաքարերի ապամոնտաժում	գմ	5.000000	0.88000	4.40000
75	80x200մմ կտրվածքի բետոնե եզրաքարերի վերատեղադրում բետոնե հիմքով	գմ	5.000000	2.83000	14.15000
76	Խճի շերտի իրականացում 5 սմ հաստությամբ	մ <sup>3</sup>	0.025000	12.48000	0.31200

77	Բետոնե գեղարվեստական սալիկների քանդում 3մ2	մ <sup>3</sup>	0.150000	1.83000	0.27450
78	Բետոնե գեղարվեստական սալիկների վերատեղադրում	մ <sup>2</sup>	3.000000	0.88000	2.64000
79	Խճի շերտի իրականացում 5 սմ հաստությամբ	մ <sup>3</sup>	0.150000	12.40000	1.86000
80	Բազալտե եզրաքարերի ապամոնտաժում /15x30/սմ	գմ	1.000000	0.88000	0.88000
81	Բազալտե եզրաքարերի վերատեղադրում բետոնե հիմքով	գմ	1.000000	3.20000	3.20000
82	Խճի շերտի իրականացում 5 սմ հաստությամբ	մ <sup>3</sup>	0.007500	12.40000	0.09300
83	4-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով կողլիցք	մ <sup>3</sup>	22.340000	0.57000	12.73380
84	4-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով, բարձելով ա/ինքնաթափերի վրա	մ <sup>3</sup>	12.000000	0.72000	8.64000
85	Ավելնորդ բնահողի տեղափոխում 13կմ	տն	21.600000	2.19577	47.42859
86	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով /խրամուղում/	մ <sup>3</sup>	1.270000	2.20000	2.79400
87	Բնահողի հետ լիցք բուլդոզերով	մ <sup>3</sup>	23.610000	0.07000	1.65270
88	Բնահողի տոփանում	մ <sup>3</sup>	23.610000	0.21000	4.95810
89	Ավազ /հիմահատակ և վերին պաշտպանիչ շերտ/	մ <sup>3</sup>	12.000000	4.65000	55.80000
90	Խճի շերտի պատրաստում 12սմ հաստությամբ	մ <sup>2</sup>	48.000000	1.20000	57.60000
91	Բիտումի տարածում	մ <sup>2</sup>	1.200000	0.30000	0.36000

92	Խոշորահատիկ ասֆալտաբետոնե ծածկույթի պատրաստում 4սմ հաստությամբ	մ <sup>2</sup>	48.000000	2.70000	129.60000
93	Մանրահատիկ ասֆալտաբետոնե ծածկույթի պատրաստում 4սմ հաստությամբ	մ <sup>2</sup>	48.000000	3.80000	182.40000
	<b>Տեխնոլոգիական մաս</b>				
94	Միացում գործող ջրագծին 50մմ	տեղ	1.000000	2.93000	2.93000
95	Խողովակաշարի անցկացում պողպատե էլ եռակցվող խողովակներից $\Phi 57 \times 3.0$ մմ, հղրավիլիկ փորձարկումով	զմ	85.000000	2.10000	178.50000
96	Խողովակաշարի անցկացում պողպատե էլ եռակցվող խողովակներից $\Phi 48 \times 3$ մմ, հղրավիլիկ փորձարկումով	զմ	12.000000	1.93000	23.16000
97	Սողնակների տեղադրում $\Phi 50$ մմ PN=1,0ՄՊա	հատ	1.000000	31.85000	31.85000
98	Պողպատե կցաշուրթի տեղադրում $\Phi 50$ մմ	հատ	2.000000	4.00000	8.00000
99	Զրթող հանգույցների մոնտաժում	հատ	8.000000	4.49000	35.92000
100	Խողովակաշարի դատարկման հանգույցի մոնտաժում	հատ	1.000000	5.77000	5.77000
101	Պողպատե ձևավոր մասերի տեղադրում	տն	0.018000	736.00000	13.24800
102	Պողպատե խողովակների ներկում 2 շերտ	մ <sup>2</sup>	11.400000	1.14000	12.99600
103	Պողպատե խողովակների լվացում	կմ	0.097000	66.40000	6.44080
	<b>Ընդամենը</b>				<b>3646.60850</b>
	<b>Սարքավորումներ</b>	<b>18.0%</b>	<b>%</b>		<b>800.00000</b>
	<b>Ընդամենը</b>				<b>4446.60850</b>

ԱԱՀ	20%	889.32170
Ընդամենը		5335.93020

Ք. Երևան, Արաբկիր վարչական շրջանի Զարյան 17 շենքի բակային տարածքների հիմնանորոգման համար ծավալաթերթ-նախահաշիվների վերահաշվարկի և նախագծերի վերակազմման աշխատանքներ

Ծավալաթերթ-Նախահաշիվ

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը /հազ դրամ/	Ընդամենը /հազ դրամ/
1	2	3	4	5	6
	<b>Շիանարարական աշխատանքներ</b>				
	<b>Քանդման աշխատանքներ</b>				
1	Շին աղբի և բնահողի բարձում ա/ինքնաթափների վրա և տեղափոխում 13կմ	տն	9.6000000	2.5000000	24.0000000
	<b>Վերանորոգման աշխատանքներ</b>				
2	Նոր բազալտե եզրաքարերի տեղադրում 300x150 մմ չափերի, բետոնե հիմքով	գմ	1.0000000	10.7000000	10.7000000
